ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

" 25 " մարտի 2013թ. № 30-Ա

«ԴԱՐԲԱՍԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասով, Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետի 2011թ. հոկտեմբերի 5-ի «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետարանի ենթակայության հարյուր տոկոս՝ պետությանը սեփականության իրավունքով պատկանող բաժնեմաս ունեցող առողջապահական բաժնետիրական ընկերությունների գործադիր մարմինների ընտրության (նշանակման) մրցութային կարգը հաստատելու մասին» N 145-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 70-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետարանի ենթակայության տակ գտնվող հարյուր տոկոս՝ պետությանը սեփականության իրավունքով պատկանող բաժնեմաս ունեցող «Դարբասի առողջության կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության տնօրենի թափուր պաշտոնի համար մրցույթ անցկացնող մրցութային հանձնաժողովի 2013թ. մարտի 20-ի <<Մրցույթի արդյունքում հաղթող ճանաչելու մասին>> N 4 որոշումը և եզրակացությունը, **կ ա ր գ ա դ ր ում եմ՝**

1. Անուշ Ներսիսյանին 2013թ. մարտի 25-ից նշանակել «Դարբասի առողջության կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության տնօրենի պաշտոնում, ազատելով նրան տնօրենի ժամանակավոր պաշտոնակատարի պարտականություններից:

Հիմք.«Դարբասի առողջության կենտրոն» ՓԲԸ տնօրենի թափուր պաշտոնի համար մրցույթ անցկացնող մրցութային հանձնաժողովի 2013թ. մարտի 20-ի <<Մրցույթի արդյունքում հաղթող ճանաչելու մասին>> N 4 որոշումը, Ա. Ներսիսյանի անձնական դիմումը:

2. Ա. Ներսիսյանի հետ կնքել աշխատանքային պայմանագիր՝ 5 տարի ժամկետով:

3.Մարզպետարանի աշխատակազմի ղեկավարին. ապահովել սույն կարգադրությունից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ **Ս.ԽԱՉԱՏՐՅԱՆ**

2013թ.մարտի 25
ք. Կապան